«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

# Ավարտական հետազոտական աշխատանք

**Թեմա՝** *<<Լսում և նկարում ենք>> Ինտեգրված նկարչություն և երաժշտության պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում*

**Հաստատություն՝** Երևանի թիվ 117 մսուր-մանկապարտեզ

**Դաստիարակ՝** Մեհրաբյան Անահիտ

**Ղեկավար՝** Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------2

1.Կարողունակությունների վրա հիմնված  կրթական մոտեցման էությունը, հիմնական սկզբունկները----------5

*1.1 Կարողունահեն կրթության սկզբունքները----------7*

2.Ինտեգրված պարապմունքները մանկապարտեզում----------8

3.Երաժշտության և նկարչության ինտեգրված պարապմունք----------10

Եզրակացություններ----------16

Օգտագործված գրականության ցանկ----------17

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

***Թեմային արդիականությունը.*** Կարողունակությունների վրա հիմնված կրթական մոտեցումը կառուցված է սովորողի մոտ որոշակի կարողությունների ձևավորման և բացահայտման վրա: Սա դառնում է ուսուցման հիմնական նպատակ ու արդյունքը: Ժամանակակից Մանկավարժի գործունեության հիմնական իմաստը յուրաքանչյուր աշակերտի համար ուսումնական և արտադպրոցական գործունեության մեջ հաջողության հասնելու, ինքն իրեն հավատալու միջավայր ստեղծելն է: Հումանիտար մանկավարժության առջնային խնդիրը կայանում է նրանում, որ մանկավարժի առջև լուրջ խնդիր է դրված հասնել նրան, որ երեխան հաճույքով սովորի, ոգևորություն ապրի իր հաջողություններից ու փորձի նորը: Հենց աշակերտի կրթական նվաճումներն են առավելապես գունավորում նրա կյանքը, որոշում հարաբերությունները դպրոցի, կրթության ու այս օղակում կանգնած դեմքերի ու իրադարձությունների հետ:

Ժամանակակից կրթական համակարգի նպատակներից մեկը է ստեղծագործ անհատականության զարգացումն է, որն ունակ է գիտակցաբար գործելու կյանքի տարբեր իրավիճակներում: Ժամանակակից արագ փոփոխությունների պայմաններում ստեղծագործ, արդյունավետ, հեշտ հարմարվող անհատականությունը դառնում է պահանջված հասարակության զարգացման բոլոր փուլերում: Սաների ստեղծագործականությունը, երևակայությունն ու ինքնուրույնությունը զարգացնելու լավագույն միջոցը, վաղ մանկության տարիքում, արվեստի հետ հաղորդակցման ուղիներ որոնելն ու միջավայր ստեղծելն է:

Վերջին հաշվով, այս ամենն ազդում է սաների բարոյական զարգացման վրա ու հետք թողնում ողջ գիտակցական կյանքի վրա: Այս մոտեցումը դրսևորվում է ուսումնական գործընթացի հատուկ կազմակերպման, ուսուցման բովանդակության, ձևերի, մեթոդների և միջոցների ընտրության մեջ, որոնցից մեկն էլ հենց երաժշտությունը նկարելեն է, կամ երեժշտության ներքո ստեղծագործեը:

Վերոբերյալն, անշուշտ փաստում էր ընտրված թեմայի արդիականությունն ու կարևորությունը:

Հետազոտական աշխատանքի ***նպատակն է*** ուսումնասիրել կարողունակահեն կրթության համատեքստում դիտարկել երաժշտության ու նկարչության ինտեգրված դասի հնարավորությունները:

Աշխատանքի խնդիրներն են.

- Ուսումնասիրել կարողունակահեն կրթության մոտեցումները,
- Քննել ինտեգրված դասի հնարավորությունները,
- Ներկայացնել երաժշտության և նկարչության ինտեգրված դասի իրականացման սեփական փորձը:

Աշխատանքի մեթոդաբանությունն ու մեթոդական հենքը: Աշխատանքը կատարել ենք հետազոտական, վերլուծական մեթոդներով՝ ուսումնասիրելով մանկավարժական համապատասխան գրականություն, ինչպես նաև հենվելով սեփական մանկավարժական փորձառության վրա:

## 1. Կարողունակությունների վրա հիմնված կրթական մոտեցման էությունը, հիմնական սկզբունկները

Ինչպես նշում է ժամանակակից կրթության տեսաբան Մարիա Ամելկինան, իր՝ «Կարողությունների վրա հիմնված մոտեցում. գործառնական կրթության զարգացման նոր փուլ» հոդվածում[1] ուսուցիչները և մեթոդաբանները տասնամյակներ շարունակ կենտրոնացել են գիտելիքների փոխանցման, այլ ոչ թե գործնականում դրանց կիրառման վրա: Խորհրդային տարիներին հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական նյութի ներկայացումը հիմնականում տեսական էր՝ հիմնված դեդուկտիվ մեթոդի վրա, այսինքն. գիտելիքները տրվում էին պատրաստի ձևով, սովորողները պետք է հիշեին և կիրառեին այն առաջադրանքներին համապատասխան: Ենթադրվում էր, որ գիտելիքների ձեռքբերման գործընթացում ինչ-որ կերպ ինքնուրույն կձևավորվեն անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները:

Իրականությունը ցույց է տվել, որ դա այդքան էլ այդպես չէ, և, օրինակ, համալսարանը հաջողությամբ ավարտած ուսանողները հաճախ ստիպված են լինում վերապատրաստվել աշխատանքում՝ իրենց մասնագիտական առաջադրանքները կատարելու համար:

Այս խնդիրն էլ ավելի է սրվել 21-րդ դարում: Տեղեկատվական տեխնոլոգիաները արագ զարգանում են, շուկայի պահանջները փոխվում են, և նման պայմաններում զուտ գիտելիքի կուտակումը՝ առանց կիրառական փորձի, կորցնում է իր իմաստը: Բայց գնալով մեծանում է տարբեր խնդիրներ լուծելու ունակության կարևորությունը, որոնցից շատերը պատրաստի լուծումներ չունեն և պահանջում են ստեղծագործական ու վերլուծական մոտեցում: Մանկավարժական գիտության ժամանակակից տեսաբանները ենթադրում են[2], որ կարողությունների վրա հիմնված կրթության մոտեցումը կարող է լուծել այս խնդիրը:

Սա չի նշանակում, որ կարողունահեն կրթական մոտեցումը կիրառվում է բացառապես մասնագիտական կրթության մեջ և ուղղված է միայն աշխատանքային կարողությունների զարգացմանը: Կարողունակությունները կարող են լինել նաև

---

[1] *Мария Амелькина , «Компетентностный подход: новый виток развития отечественного образования», https://cyberleninka.ru/article/n/kompetentnostnyy-podhod-novyy-vitok-razvitiya-otechestvennogo-obrazovaniya, 30.11.2023*

[2] *Хуторской А.В. Дидактическая эвристика. Теория и технология креативного обучения. М.: Изд-во Московского университета, 2003, с. 148.*

ունիվերսալ, այսինքն՝ կապված անհատի ընդհանուր զարգացման հետ, որոնք անհրաժեշտ են անձնական և սոցիալական կյանքի համար (չնայած, ի վերջո, դրանք անհրաժեշտ են նաև աշխատանքում, օրինակ՝ ընդհանուր հաղորդակցման հմտություններ, համակարգված և քննադատական մտածողություն և այլն):

«Սովորել գործունեության միջոցով» հասկացությունն առաջին անգամ առաջարկել է ամերիկացի գիտնական Դ. Դյուին: Նա բացահայտեց կարողունահեն դասավանդման ու կրթության մեջ մոտեցման հիմնական սկզբունքները՝ հաշվի առնելով ուսանողների շահերը.

- սովորել ուսուցման և գործողությունների միջոցով,
- ճանաչողություն և գիտելիք՝ որպես դժվարությունների հաղթահարման հետևանք,
- ազատ ստեղծագործական աշխատանք և համագործակցություն.

«Գիտելիքը պետք է ոչ թե պատրաստի տրվի սովորողին, այլ նրան պետք է տանել այն ուղիով, որ ինքը գտնի գիտելիքը: Դասավանդման այս մեթոդը լավագույնն է, ամենադժվարը, ամենահազվադեպը...»[3] (Ա. Դիսթերվեգ):

Կարողունահեն կրթական մոտեցումն ամենևին էլ կրթական տեխնոլոգիաների կամ մեթոդական տեխնիկայի ամբողջություն չէ: Սա կրթության մի տեսակ փիլիսոփայություն է, մեթոդաբանական հիմք: Առաջին հերթին ոչ թե սաների կողմից գիտելիքների կուտակումն է նեղ առարկայական ոլորտում, այլ անձի ձևավորումը, իսկ գիտելիքն «ինքնուրույն է կառուցվում»՝ առարկայական աշխարհում երեխայի գործունեության գործընթացում:

Ըստ Լեոնտևի, «Ուսուցման գործընթացը սովորողի գործունեության գործընթաց է, որն ուղղված է նրա գիտակցության և ընդհանրապես անձի ձևավորմանը, նոր գիտելիքները պատրաստի ձևով չեն տրվում: Ահա թե ինչ է «կարողունահեն մոտեցումը» կրթության մեջ»[4]:

---

[3] *Деятельностный подход в образовании, https://www.informio.ru/publications/id3555/Dejatelnostnyi-podhod-v-obrazovanii// 03.12.2023.*
[4] *Նույն տեղում:*

### *1.1 Կարողունահեն կրթության սկզբունքները*

Կարողունակության վրա հիմնված կրթության մոտեցման հիմնական սկզբուքններն են[5].

***Միջառարկայականություն.*** Սովորողը տարբեր առարկայական գիտելիքներն ու հմտությունները յուրացնում է ոչ թե առանձին, այլ միմյանց հետ զուգակցված, այսինքն՝ համալիր: Սա օգնում է նրան ձևավորել ամբողջական պատկերացում աշխարհի մասին և զարգացնել համակարգային մտածողությունը: Ենթադրվում է, որ ապագայում նա կկարողանա ավելի լավ կողմնորոշվել բարդ իրավիճակներում, նկատել ոչ ակնհայտ հարաբերությունները և կիրառել մեթոդների լայն շրջանակ՝ գործնական խնդիրների լուծման համար:

***Անհատի ստեղծագործականության զարգացում***. Այս սկզբունքը ներառում է շրջանակներից դուրս մտածելու, նոր գաղափարներ ու մոտեցումներ առաջ քաշելու և առանց պատրաստի պատասխանների խնդիրների լուծումներ գտնելու կարողության զարգացում:

***Հաղորդակցման հմտությունների ձևավորում:*** Մարդկանց հետ կապ գտնելու, բանակցելու, կոնֆլիկտները լուծելու և թիմում աշխատելու կարողություն - շատ է ասվում և գրվում այս հմտությունների կարևորության մասին: Իրոք, դրանք անհրաժեշտ են ցանկացած ժամանակակից հասուն մարդու և մասնագետի:

***Շարունակական կրթություն և մասնագիտական ճկունություն***: Մարդը, ով պատրաստ է և կարողանում է արագ տիրապետել նոր մեթոդներին ու տեխնոլոգիաներին, անընդհատ սովորել և թարմացրել է իր գիտելիքները, ազատ ու անկաշկանդ կկարողանա կիրառել իր հմտությունները:

***Անհատականացում.*** Յուրաքանչյուր սովորողի համար կարևոր է մշակել կրթական ուղի, որը հաշվի կառնի նրա անհատականության գծերը, հետաքրքրությունները և հնարավորությունները: Ճիշտ է, ինչպես նշում է Մարիա Ամելկինան, անհատականացման սկզբունքը բախվում է մասնագիտական կողմնորոշման սկզբունքին, որովհետև շուկայական տնտեսության մեջ միշտ չէ, որ այն

[5] *Методологические принципы компетентностного подхода в профессиональном образовании* *https://cyberleninka.ru/article/n/metodologicheskie-printsipy-kompetentnostnogo-podhoda-v-professionalnom-obrazovanii*, *30.11.2023*

ոլորտը, որտեղ մարդուն հետաքրքիր է, պահանջարկ կունենա[6]: Այնուամենայնիվ կարևոր է, որ անձը գիտակցի իր նախասիրությունների ու ուժեղ կողմերի շրջանակը:

Ըստ հետազոտողների, կրթական այս մոտեցումը համալիր է և կիրառական կրթության բոլոր օղակներում՝ նախադպրոցականից մինչև մասնագիտական: Որպես հավելում նշենք, որ հատկապես նախադպրոցական օղակում կարևոր է առաջնորդվել կարողունահեն կրթության սկզբունքներով՝ ելնելով անձի զարգացման տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններից:

## 2. *Ինտեգրված պարապմունքները մանկապարտեզում*

Նախադպրոցական տարիքում ինտեգրատիվ կրթական մոտեցում կիրառելու և ինտեգրված պարապմունքների կազմակերպման անհրաժեշտությունը բացատրվում է մի շարք պատճառներով.

- Երեխաներին շրջապատող աշխարհը նրանց կողմից հայտնի է իր բազմազանությամբ և միասնությամբ, և հաճախ նախադպրոցական կրթական ծրագրի բաժինները, որոնք ուղղված են այս միասնության առանձին երևույթների ուսումնասիրմանը, պատկերացում չեն տալիս ամբողջ երևույթի մասին՝ այն բաժանելով առանձին հատվածների:
- Ինտեգրված պարապմունքները զարգացնում են հենց սաների ներուժը, խրախուսում նրանց ակտիվորեն հասկանալ շրջապատող իրականությունը, հասկանալ և գտնել պատճառահետևանքային կապեր, զարգացնել տրամաբանություն, մտածողություն և հաղորդակցման կարողություններ:
- Ինտեգրված պարապմունքի ձևը ոչ ստանդարտ է և հետաքրքիր: Պարապմուքնի ընթացքում տարբեր տեսակի աշխատանքների կիրառումը բարձր մակարդակի վրա է պահում երեխայի ուշադրությունը, ինչը թույլ է տալիս խոսել նմման պարապմունքների բավակնին բարձր արդյունավետության մասին:
- Ինտեգրված պարապմունքները բացահայտում են նոր մանկավարժական հնարավորություններ, անցնելով մի գործունեությունից մյուսը, զգալիորեն

[6] *Мария Амелькина , «Компетентностный подход: новый виток развития отечественного образования», https://cyberleninka.ru/article/n/kompetentnostnyy-podhod-novyy-vitok-razvitiya-otechestvennogo-obrazovaniya, 30.11.2023*

մեծացնում են ճանաչողական հետաքրքրությունը և ծառայում երևակայության, ուշադրության, մտածողության, խոսքի և հիշողության զարգացմանը:

- Ինտեգրումը ժամանակակից հասարակության մեջ բացատրում է կրթության մեջ ինտեգրման անհրաժեշտությունը: Ժամանակակից հասարակությունը կարիք ունի բարձր որակավորում ունեցող, լավ պատրաստված մասնագետների: Այս կարիքը բավարարելու համար կրթված անհատի ձևավորումը պետք է սկսվի մանկապարտեզից և կրտսեր դասարաններից, ինչին նպաստում է նախադպրոցական ուսումնական հաստատություններին ինտեգրումը:
- Ինտեգրումը մանկավարժի ինքնաիրացման, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու հնարավորություն է տալիս, ինչպես նաև նպաստում է նրա կարողությունների բացահայտմանը:

Ինտեգրված դասը հիմնված է փոխազդեցության, տարբեր կրթական ոլորտների գործունեության, արվեստի տեսակների փոխլրացման վրա, որոնցում տեղի է ունենում գեղարվեստական ընկալման և երևակայական մտածողության սինթեզ՝ ուղղված կերպարի ամբողջական ընկալմանը:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքը տարբերվում է սովորական պարապմունքների կառուցվածքից, և դրա վրա դրվում են հետևյալ պահանջները.

- ուսումնական նյութի հստակություն, կոմպակտություն, հակիրճություն,
- յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում ամբողջական ծրագրի բաժինների նյութի մանրակրկիտ մտածվածություն և տրամաբանական փոխկապակցում,
- ինտեգրվող առարկաների նյութի փոխկապակցվածություն դասի յուրաքանչյուր փուլում,
- պարապմունքի ընթացքում օգտագործվող ուսումնական նյութի համակարգված և մատչելի ներկայացում,
- հստակ նշված պարապմունքի ժամանակին հավատարիմ մնալու անհրաժեշտության բացակայություն[7]:

Ինտեգրված պարապմունքը անցկացվում է ծանոթ նյութով, լուծում է մի քանի խնդիր և անցկացվում է ժամանակ առ ժամանակ: Ինտեգրված դասը կառուցվում է

[7] Сажина С.,Технология интегрированного обучения, Творческий центр, М., 2008г, стр. 34.

երեխաների գործունեության մի քանի տեսակների և երեխայի զարգացման տարբեր միջոցների համադրման սկզբունքով և իրականացվում է համակարգված:

Մանկապարտեզի աշխատանքի առաջնահերթ ուղղությունը նախադպրոցական տարիքի երեխաների գեղարվեստական և գեղագիտական դաստիարակությունն է: Այս ուղղության արդյունավետությունը մեծապես որոշվում է գեղագիտական ցիկլի բոլոր միջոցների ինտեգրված օգտագործմամբ՝ թատրոն, երաժշտություն, գեղարվեստական գրականություն, նկարչություն:

Ինտեգրումը հատուկ կազմակերպված դասերի համակարգում միավորում է այս գործիքները և, հետևաբար, շատ տեղին է, քանի որ.

- Ինտեգրված գործունեությունը նպաստում է երեխաների խորը ներթափանցմանը բառերի իմաստի մեջ, գույների և հնչյունների աշխարհ.
- Օգնում է գրագետ բանավոր խոսքի ձևավորմանը, դրա զարգացմանն ու հարստացմանը.
- Զարգացնում է գեղագիտական ճաշակը, արվեստի գործերը հասկանալու և գնահատելու կարողությունը.
- Ազդում է մտավոր գործընթացների վրա, որոնք հիմք են հանդիսանում երեխայի գեղարվեստական, ստեղծագործական և երաժշտական կարողությունների ձևավորման համար:

## 3. Երաժշտության և նկարչության ինտեգրված պարապմունք

Ժամանակակից հումանիտար մանկավարժությունը այսօր կրթական առանցքային ու կարևոր խնդիր է համարում երեխաների բարոյական դաստիարակությունը, կյանքին ու նրա տարբեր իրավիճակներին փիլիսոփայորեն ու ստեղծագործաբար մոտենալու կարողության զարգացումը: Երաժշտության ու նկարչության ինտեգրված պարապմունքները զարգացնում են սովորողների բարոյական մշակույթը, ստեղծագործական կարողությունները: Բացահայտվում է երեխաների հետաքրքրությունն ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն զարգացնում է երեխայի զգացմունքներն ու հոգին: Ինտեգրումն օգնում է երեխային տեսնել աշխարհի հարստությունն ու բազմազանությունը, հետևաբար այսպիսի

պարապմունքները նպաստում են կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Պարապմունքի նպատակը. Նպաստել նախադպրոցականի սոցիալական ինտեգրացիայի բարձրացմանը, մեծացնել շրջապատող իրականությունում ինտեգրվելու հնարավորությունները

Խնդիրները՝

- Ստեղծել պայմաններ երաժշտական ընկալման և երևակայական մտածողության զարգացման համար (գեղարվեստական և գեղագիտական ընկալման զարգացում).
- Ստեղծել պայմաններ պատկերի միջոցով երաժշտության բնույթը փոխանցելու կարողության զարգացման համար (գեղարվեստական և գեղագիտական հմտությունների զարգացում).
- Երեխաների համար ապահովել իրենց կարծիքն արտահայտելու պայմաններ (սոցիալ-հաղորդակցական հմտությունների զարգացում).
- Երաժշտական ստեղծագործության բնույթի մասին ինքնուրույն եզրակացություններ անելու համար պայմաններ ապահովել (սոցիալական և հաղորդակցական զարգացում).
- Ստեղծել պայմաններ՝ խրախուսելու երեխաների բանավոր խոսքը, (խոսքի զարգացում).
- Ստեղծել պայմաններ երկխոսությունների զարգացման համար (խոսքի զարգացում).
- Նպաստել փոխօգնության մթնոլորտի ձևավորմանը (սոցիալ-հաղորդակցական զարգացում):

Գործունեության հիմնական ձևերը.

1. հաղորդակցություն երեխաների և դաստիարակի միջև.
2. երեխայի շփումը հասակակիցների հետ.
3. երաժշտություն լսել.
4. նկարել.
5. խաղ:

Անհրաժեշտ պարագաներ՝ երաժշտական ստեղծագործություն, ալբոմ, վրձիններ, գուաշ:

Երեխաները դահլիճ են մտնում երաժշտության ներքո:

Երաժշտական ղեկավար. Սիրուններ, այսօր կխոսենք երաժշտության մասին:

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է երաժշտությունը:

Որտեղ է այն հնչում:

Ի՞նչ կարող ենք անել երաժշտության հետ:

Կարո՞ղ ենք արդյոք տեսնել նրան:

Կատարվում է «Հնչյուններ» վարժությունը առ,

Երաժշտական ղեկավար. «Ի՞նչ հնչյուններից  եք ձեզ լավ զգում:

Որո՞նք են վախ առաջացնում:

Որո՞նք են տհաճ:

Ո՞ր հնչյունն է շարժում հետաքրքրասիրությունը:

Դուք կարո՞ղ եք անվանել կամ պատկերել այս հնչյունները:

Դաստիարակ. Երեխաներ, իսկ դուք գիտեք, որ երաժշտությունը ոչ միայն կարելի է լսել, այլև «նկարել»:

Առաջարկում եմ Առաջարկում եմ փակել մեր աչքերը և լսել երաժշտական ստեղծագործությունը:  Երաժշտություն է հնչում (Պ.Ի. Չայկովսկի «Ծաղիկների վալսը» «Ճչելկունչիկ» բալետից)[8]:

Ձեզ ինչ ներշնչեց այս երաժշտությունը (տրամադրություն, տպավորություններ, կոնկրետ կամ վերացական բան):

Ի՞նչ շարժումներ են բնորոշ այս տեսակի երաժշտությանը:

Ինչպե՞ս դա զգացիք: Ձեր կարծիքով ո՞ր գույնը կարող է ներկայացնել նման երաժշտությունը:

Ի՞նչ գծեր կամ բծեր կարելի է նկարել այս մեղեդին լսելուց հետո:

Այժմ բոլոր պատկերներն ու գույները, որոնք հայտնվեցին ձեր աչքի առաջ, վրձինով և ներկերով փոխանցեք թղթին:

Երաժշտությունը կրկին հնչում է, երեխաները նկարում են:

[8] https://www.youtube.com/watch?v=9a4DnEWXMHM, *հասանելի է*

Ամփոփելով մեր իրականացրած պարապմունքի արդյունքները, պետք է նշենք, որ երեխաների մոտ ողջ ընթացքում նկատելի էր շատ բարձր մոտիվացիա: Նման աշխատանքների արդյունքում երեխան սովորում է ինքնուրույն նպատակ դնել և գտնել ուղիներ, այդ թվում՝ միջոցներ՝ դրան հասնելու (այսինքն՝ օպտիմալ կերպով կազմակերպել իր գործունեությունը), օգնում է երեխային, զարգացնել

վերահսկողության և ինքնատիրապետման հմտությունները, ճանաչել ինքն իրեն ու իրեն շրջապատող իրականությունը, ինքնուրույն բացահայտումներ անել:

Գործունեության ընթացքում երեխան սովորում է նոր բաներ և առաջ է շարժվում իր զարգացման ճանապարհով: Գիտելիքի ձեռքբերման գործընթացը միշտ էլ պահանջում է որոշակի ճանաչողական գործողությունների կատարում:

Սովորելու կարողությանը հասնելու համար երեխայից պահանջվում է լիարժեք մասնակցել ուսումնական գործունեության բոլոր բաղադրիչներին, իսկ նմանատիպ աշխատանքների ժամանակ երեխաները գտնվում են գործողությունների անմիջապես կիզակետում: Քանի որ յուրաքանչյուրն արտահայտելու է իր զգացողություններն ու պատկերացումները, չկա ճիշտ կամ սխալ, երեխան ազատ է արտահայտվել և երեխաները կարողանում են ազատ խոսք կառուցել, բանավոր ներկայացնել իրենց լսածը, պատկերացրածը

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնական գործունեության կազմակերպումը, ըստ ժամանակակից կրթական չափորոշիչների ու կրթության փիլիսոփայության, պետք է կառուցված լինի հետևյալ կետերի վրա.

- Երեխաների մտավոր և գործնական կարողությունների զարգացում՝ կրթական խնդրի լուծման ամենաօպտիմալ տարբերակները գտնելու համար.
- Ուսուցման գործընթացում խնդրահարույց իրավիճակների ստեղծում, այդ խնդիրների լուծման հարցում սովորողների անկախ ճանաչողական գործունեության զարգացում.
- Երեխայի մտածողության ինտենսիվության զարգացում՝ նոր գիտելիքների որոնման և կրթական խնդիրների լուծման նոր ուղիների որոնման արդյունքում.
- Երեխաների ճանաչողական, մշակութային և գեղագիտական զարգացման առաջընթացի և աշխարհի ստեղծագործական վերափոխման գիտակցման համար պայմանների ստեղծում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում, 13.05.2021
2. Сажина С.,Технология интегрированного обучения, Творческий центр, М., 2008г.
3. Хуторской А.В. Дидактическая эвристика. Теория и технология креативного обучения. М.:
   Изд-во Московского университета, 2003.
4. Деятельностный подход в образовании,

https://www.informio.ru/publications/id3555/Dejatelnostnyi-podhod-v-obrazovanii//
03.12.2023.

5. Мария Амелькина , «Компетентностный подход: новый виток развития отечественного образования», https://cyberleninka.ru/article/n/kompetentnostnyy-podhod-novyy-vitok-razvitiya-otechestvennogo-obrazovaniya, 30.11.2023
6. Методологические принципы компетентностного подхода в профессиональном образовании https://cyberleninka.ru/article/n/metodologicheskie-printsipy-kompetentnostnogo-podhoda-v-professionalnom-obrazovanii, 30.11.2023